ՀՀ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՊԵՏԻ Ժ/Պ ՊԱՐՈՆ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Հովհաննիսյան

Հայտնում եմ Ձեզ, որ 2024 թվականի հունիսի 24-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 23-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

1. Իրականացրել եմ տնտեսվարող սուբյեկտների հաշվառման, խորհրդատվության տրամադրման աշխատանքներ, ինչպես նաև մասնակցել եմ ռեեստրում գրանցման աշխատանքներին.
2. Իրականացրել եմ մարզի տարածքում և Տեսչական մարմնի կողմից ստացված տեղեկատվությանը, բողոքներին, թեժ գծին ստացված զանգերին արձագանքման աշխատանքները.
3. Ներկայացրել եմ առարկություններ և առաջարկություններ քննարկման ներկայացված գրությունների վերաբերյալ.
4. Մասնակցել եմ մարզի տարածքում սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտարական ենթահսկման ապրանքների արտադրության, պահպանման, տեղափոխման, իրացման, վաճառքի, կենդանիների աճեցման, պահման, փոխադրման, իրացման, սպանդի, վերամշակման փուլերի և այդ գործընթացներում տնտեսվարողների գործունեության դիտարկումներին, մշտադիտարկումներին, ստուգումներին.
5. Մասնակցել եմ մարզի տարածքում անասնաբուժական գործունեության, հանրապետությունում կենդանիների վարակիչ ու ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի համալիրում հակաանասնահամաճարակային և

անասնաբուժասանիտարական կանխարգելիչ և հարկադիր միջոցառումների, սերոմոնիթորինգի վերահսկողության աշխատանքներին.

6. Մասնակցել եմ մարզի տարածքում հակաանասնահամաճարակային միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ անասնաբուժական միջոցների, անասնաբուժական դեղամիջոցների պահպանման, բաշխման, օգտագործման, իրացման, վաճառքի գործընթացների նկատմամբ վերահսկողության աշխատանքներին.
7. Մասնակցել եմ մարզի տարածքում գյուղատնտեսական կենդանիների հաշվառման և համարակալման, արհեստական սերմնավորման, աշխատանքների իրականացման, կենդանիների պահվածքի, անասնապահական շինությունների զոոհիգենիկ և անասնաբուժասանիտարական նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության աշխատանքներին.
8. Մասնակցել եմ սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտարական ենթահսկման ապրանքների ոչնչացման կամ օգտահանման գործընթացների նկատմամբ վերահսկողության աշխատանքներին.
9. Մասնակցել եմ մարզի տարածքում բուսասանիտարական ենթահսկման ապրանքներ արտադրող, իրացնող, փոխադրող, ներմուծող և արտահանող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական բուսասանիտարական հաշվառման աշխատանքներին.
10. Մասնակցել եմ մարզի տարածքում անասնաբուժության, սննդամթերքի և կերի անվտանգության, բուսասանիտարիայի բնագավառներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների դեպքերում սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի, անասնաբուժական և բուսասանիտարական ենթահսկման ապրանքների արտադրություն, պահպանում, տեղափոխում, իրացում, վաճառք, կենդանիներ աճեցնող, փոխադրող, իրացնող, կենդանիների սպանդ իրականացնող անձանց գործունեության, տեխնոլոգիական սարքավորումների օգտագործման, շահագործման և տեխնոլոգիական գործընթացների կասեցման կամ արգելման, բացահայտված խախտումները և թերությունները վերացնելու նպատակով պարտադիր կատարման հանձնարարականների, առաջադրանքների սահմանման, արտադրանքի իրացման կասեցման կամ արգելման, խախտումների վերացման կարգադրագրերի արձակման,

օրենքով սահմանված կարգով վարչական պատասխանատվության միջոցների կիրառման աշխատանքներին.

11. Մասնակցել եմ Տեսչական մարմնի կողմից վարվող էլեկտրոնային տեղեկատվական բազաների վարման աշխատանքներին.

ՀՀ ՍԱՏՄ Շիրակի մարզային կենտրոնի փորձագետ՝ Ս. Խաչատրյան